ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ

ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ - 2024

2024թ. ՀՈՒԼԻՍԻ 18-ին մայրաքաղաքի «Օպերա սուիթ» հյուրանոցում տեղի ունեցավ Երեւանի մամուլի ակումբի (ԵՄԱ)՝ էթիկական լրագրության մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

ԵՄԱ-ն նպատակ ունենալով խրախուսել հայաստանյան լրատվամիջոցներում էթիկական լրագրության հետագա զարգացումը, մասնագիտական էթիկայի համընդհանուր կանոնների, «Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկական սկզբունքների կանոնագրի» դրույթների հետեւողական պահպանումը՝ սահմանել է ***էթիկական լրագրության ամենամյա մրցանակ***:

ԵՄԱ՝ էթիկական լրագրության 2023-2024թթ. մրցանակակիրները՝

ԵՄԱ մրցանակ

Արշալույս ՄՂԴԵՍՅԱՆ, «ՍիվիլՆեթ» առցանց հեռուստաընկերության հաղորդավար, քաղաքական մեկնաբան: Մրցանակը հանձնեց Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամ Նունե Սարգսյանը:

ԵՄԱ մրցանակ

Հայարփի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Ինֆոքոմ» առցանց պարբերականի լրագրող: Մրցանակը հանձնեց Երեւանի մամուլի ակումբի էթիկայի հանձնաժողովի նախագահ, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամ Վիգեն Սարգսյանը:

ԵՄԱ մրցանակ

Տիրայր ՄՈՒՐԱԴՅԱՆ, «Հետք» պարբերականի լրագրող: Մրցանակը հանձնեց «Մեդիամաքսի» գլխավոր խմբագիր, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդամ Դավիթ Ալավերդյանը:

Միջոցառումը կազմակերպվել է Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացվող «Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագրի շրջանակում: